

Սակայն Յոյնք յետ խափանելոյ զհրովարտակա Հայոց , դարձեալ ինքեանց սեփականեալ էին զընդհանուր նորոգութիւնն Ս. Տեղեաց , եւ ամբառնալ Սուլթան Մէճիտ Արքայի 'ի գահ հայսերական Օսմանեան Պետութեան , ետուն նորոգել զայն հրովարտակ , եւ առին Ոստիկան 'ի Դրանէ , եւ եկեալ յերուսաղէմ ետուն առնել քննութիւն առաջի Դատաւորին եւ բաղմութեան այլազգեաց , 'ի Տաճարին Ս. Յարութեան եւ յեկեղեցին Բեթղէհէմի , յորս միայն ներկայ գտան Հայք եւ Յոյնք , եւ Լատին կղերք ոչ երբէք երեւեցան 'ի միջի' եւ ոչ ետուն թոյլ մերձենալ եւ քննել զտեղիս իւրեանց , եւ ստորագրեալ արձանացան իւրաքանչիւր տեղիքն , որք կարօտ էին նորոգութեան եւ շինութեան : Տեսեալ Հայոց թէ առաջի կայ ինքեանց զրկիլ յիրաւանց իւրեանց , մատեան առ Դատաւորն եւ յայտ արարեալ նմա զգանկատանս՝ ետուն գրել 'ի Դուռն , զի նորոգութիւն Տաճարին Ս. Յարութեան եւ եկեղեցւոյն Բեթղէհէմի հայսերական հրովարտակա հրամայեալ էր յառաջագոյն լինել 'ի ձեռն Հայոց , եւ 'ի հակառակութենէ՝ միաբանացն Յունաց՝ խափանեցան նոքա , եւ գործ շինութեան վերստին սեփականեցաւ Յունաց . եւ ամօք յառաջ հրովարտակն այն նորոգեցաւ , եւ զայս զխոմամբ ոչ յայտնեցին Յոյնք , զի բաժինք Հայոց մնացեն աւերակ . եւ նովաւ այժմ կատարեցին զէարեւոր քննութիւնս , եւ ըստ այնմ գրեցաւ Իլամ : Սակայն եթէ նորոգութիւնն մի միայն ձեռամբ Յունաց լինիցի , անտարակոյս զտեղիս իւրեանց ըստ ամենայն պիտոյից յարմարեալ զարդարեն , եւ զտեղիս Հայոց հարեւանցի հայեցուածով փոքր նորոգութեամբ բաւ համարին . որպէս նախ քան զհրդեհ Տաճարին Հայք ունէին գերկուս սենեակս 'ի վերնատան եւ երկու 'ի վերայ կամարի Իւղարերից . Յոյնք հաճեցան չինել զերկուսին սենեակս վերնատան , այլ 'ի վերայ կամարին ոչ . եւ 'ի ժամանակի քննութեան ոչ ետուն թոյլ մուծանել յարձանագիրս , թէ եւ Հայք ստիպէին բաղմօք , եւ 'ի շինութեանն ոչ կամեցան չինել . եւ ոյս հաստատեցաւ վկայութեամբ այլազգեաց , եւ վճիռ մեծի Դեմոստին հրամայէ չինել զայնս : Հայք 'ի սկզբանէ Ենտի գորով հաւատարիմ հպատակ Օսմանեան Պետութեան , եւ ոչ 'ի միւսմ ժամանակի հակառակ